ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

15 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Լեվոն Խաչատրյանը, Եղիազար Հարությունյանը, Լարիսա Արտաշեսյանը, Սարգիս Ղազարյանը, Արտյոմ Ազիզյանը, Գոռ Սաֆարյանը, Նարեկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2025թվականի վեցերորդ նստաշրջանի մայիսի 15 -ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 18-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.Ակունք համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց,անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին
3.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու մասին
4.Համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 81-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 25-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի 2025 թվականի աշխատակազմի կառուցվածքը,աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ» N 81-Լ որոշման մեջ կատարել փոփոխություններ.
1) որոշման «Հավելված 2»-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելված 2»-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ,ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը,համայնքի ավագանին որոշում է՝

1.«Նոր գյուղի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել անհատույց,անժամկետ օգտագործման իրավունքով

համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համաձայն հավելված 1-ի,
2.«Ակունք համայնքի մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել անհատույց,անժամկետ օգտագործման իրավունքով համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համաձայն հավելված 2-ի,
3.«Կապուտանի ցերեկային խնամքի կենտրոն»համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել անհատույց,անժամկետ օգտագործման իրավունքով համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համաձայն հավելված 3-ի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՅՈՒՐԱ ԹԱԿՎՈՐՅԱՆ)

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ,67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
   1)աճուրդ վաճառքով համաձայն հավելված 1-ի
   2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի:

   Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն«Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու վեցերորդ՝ գարնանային նստաշրջանի հերթական նիստը հրավիրել 2025 թվականի հունիսի 25-ին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը

_____